**Հայտարարություն**

**Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի Աշխարհագրության(4 դասաժամ), Մաթեմատիկա(17 դասաժամ),ԹԳՀԳ(6 դասաժամ ),Ռուսաց լեզու(18 դասաժամ),ֆիզիկա(4 դասաժամ),Անգլերեն(15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար;**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 13-ից **հուլիսի 24-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հուլիսի 29-ին՝ **ժամը 12:00-ին**, Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջն. դպրոցում. հասցե՝ Լոռու մարզ, գ. Ջիլիզա, 1 փող., շենք 12:

Տեղեկությունների համար զանգահարել (077) 42-09-25 հեռախոսահամարով: